



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 15 » փետրվարի 2015թ.

N 278/Ա

ք. Ստեփանակերտ


ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՄԲԱԿԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակային պարապմունքների կազմակերպման ու անցկացման կանոնակարգման նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակային պարապմունքների կազմակերպման ու անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:



Ս. ԱՍՐՅԱՆ

ԿԱՐԳ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակային պարապմունքների  
կազմակերպման ու անցկացման

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների (տարրական դասարաններում՝ ծնողների) ցանկությամբ և անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում կարող են կազմակերպվել խմբակային պարապմունքներ:

Խմբակային պարապմունքների խնդիրներն են՝

1) սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական և ֆիզիկական դաստիարակության ապահովումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները.

2) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

3) դպրոցում ուսումնասիրվող առարկաներից ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը,

4) համակողմանի և ներդաշնակ զարգացած անձի ձևավորումը:

2. Խմբակները կարող են լինել՝

-դպրոցում ուսումնասիրվող առարկաներից լրացուցիչ խորացված,

-արվեստի և արհեստների ստեղծագործական,

-մարզական:

3. Սովորողները խմբակներում ընդգրկվում են՝ համաձայն իրենց դիմումի (տարրական դասարաններում՝ ծնողի), նախասիրությունների և տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Սովորողը կարող է մասնակցել առավելագույնը երեք խմբակի:

4. Խմբակային պարապմունքներին, հաշվի առնելով տվյալ խմբակային պարապմունքի առանձնահատկությունները, կարող է հատկացվել շաբաթական 1-3 դասաժամ: Դասաժամի տևողությունը՝ 45 րոպե:

5. Խմբակային պարապմունքների ժամանակ խմբի խտությունը չի կարող պակաս լինել յոթից:

6. Խմբակի ղեկավար կարող է լինել այն անձը, ով ունի համապատասխան մասնագիտական կրթություն, բավարար փորձ և գիտելիքներ:

7. Խմբակի աշխատանքը պետք է իրականացվի հստակ ծրագրով և ըստ այդ ծրագրի ուսումնական հաստատության տնօրենության կողմից հաստատված թեմատիկ պլանով:

8. Խմբակային աշխատանքները կարգավորվում են ուսումնական հաստատության տնօրենության կողմից հաստատված խմբակային պարապմունքների ժամանակացույցով:

9. Պարապմունքները հաշվառվում են խմբակային պարապմունքների համար նախատեսված մատյանում:

10. Խմբակների աշխատանքների վերահսկողությունը իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենության կողմից սահմանված կարգով:

11. Ուսումնական հաստատության տնօրենությունը պատասխանատու է խմբակային պարապմունքների ժամանակ օգտագործվող տարածքի և գույքի պահպանման համար: